



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1351-Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ 2023Թ ԾԱԽՍԵՐԻ
ՆԱԽԱՀԱՇՎՈՒՄ ԿԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով, Արմավիր համայնքի ավագանու 26.12.2022թ. թիվ217-Ն որոշման 8-րդ կետով, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Բարեկարգում» տնօրինության տնօրեն Ա. Հարությունյանի 09.11.2023թ-ի թիվ 6208 զեկուցագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Բարեկարգում» տնօրինության 05 բաժնի 1 խմբի 1դասի «Աղբահանություն» ծրագրի ծախսերի «Տրանսպորտային նյութեր» 4264 հոդվածի խնայված գումարներից պակասեցնել 1162.5 հազար դրամ և ավելացնել «Գրասենյակային նյութեր և հագուստ» 4261 հոդվածին՝ ձմեռային արտահագուստ ձեռք բերելու համար:
- 2.«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Բարեկարգում» տնօրինության 2023թ-ի ծախսերի նախահաշվում կատարել համապատասխան փոփոխություններ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1352-Ա

«ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԻ
ԹԻՎ 8 ՄՍՈՒՐ- ՄԱՆԿԱԿԱՐԳՈՒՄ» ՀՈԱԿ-Ի 2023Թ. ԾԱԽՍԵՐԻ
ՆԱԽԱՀԱՇՎՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով, Արմավիր համայնքի ավագանու 26.12.2022թ. թիվ 217-Ն որոշման 8-րդ կետով և հիմք ընդունելով «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 8 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի 10.11.2023թ.թիվ 6249 գեկուցագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- 1.«ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 8 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ծախսերի «Կենցաղային և հանրային սննդի նյութեր» 4267 հոդվածի սննդի գնման արդյունքում խնայված գումարներից պակասեցնել 95.0 հազար դրամ և ավելացնել «Այլ մեքենաներ և սարքավորումներ» 5129 հոդվածին՝ պոմպ ձեռք բերելու համար:
2. «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 8 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ծախսերի նախահաշվում կատարել համապատասխան փոփոխություններ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1353-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքային սեփականություն հանդիսացող 5-րդ փողոցի 1-ին շենքի հարևանությամբ գտնվող 19.95 քմ մակերեսով գույքին տալ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնք, ք. Արմավիր 5-րդ փողոց 1/8:

2. Սույն որոշմամբ անշարժ գույքին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2023 թ. նոյեմբեր 13
ք. Արմավիր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1354-Ա

ՈՌԻՋԱՆԱ ԱՏԵՓԱՆԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, /ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր 2023թ. սեպտեմբերի 25/ հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը, Ռուզաննա Ստեփանի Համբարձումյանի 08.11.2023.թ թիվ 6168 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ռուզաննա Ստեփանի Համբարձումյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաք 04-001-0335-016 կադաստրային ծածկագրում գտնվող գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Արմավիր քաղաք, Ս.Շահումյան փողոց 16/1:
2. Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական և գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:
4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Դ.ԽՈՒՂԱԹՅԱՆ

2023 թ. նոյեմբեր 13
ք. Արմավիր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 1355-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱՔՍ ԳՅՈՒՂ,
Մ.ԽԱԶՈՒՆՑԻ ՓՈՂՈՑ 75 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ՄՊԱՐՏԱԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ, ՍՈՆԻԿ ԲԱՅԱԹՅԱՆԻ, ԼՈՒՍԻՆԵ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԵՎ
ԱԼՄԱՍՏ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով, 50-րդ և 51-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8, 11-րդ կետերով և 13-րդ կետի <<ա>> և <<բ>> ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> N600-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին, 2-րդ 4-րդ կետով, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր Արաքս գյուղ 04-016-0024-0028 կադաստրային ծածկագրով հողամասում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022թ. հունվարի 17-ի թիվ 01 արտահերթ նիստ 006-Ա որոշում և Սպարտակ Ստեփանյանի 28.03.2023 թվականի թիվ 1945 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վերականգնել Սպարտակ Ստեփանյանի, Սոնիկ Բայաթյանի, Լուսինե Ստեփանյանի Եվ Ալմաստ Ստեփանյանի սեփականության իրավունքը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արաքս գյուղի 04-016-0024-0028 կադաստրային

ծածկագրով գույքային միավորների՝ 799.0 քմ օրինական հողամասի վրա 1980թ. և 1999թ. կառուցված 117.7 քմ մակերեսով բնակելի տան նկատմամբ:

2. Սպարտակ Ստեփանյանին, Սոնիկ Բայաթյանին, Լուսինե Ստեփանյանին և Ալմաստ Ստեփանյանին պատկանող՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Արաքս գյուղի 04-016-0024-0028 կադաստրային ծածկագրով 799.0քմ մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված բնակելի տնից՝ 21.6 քմ արտաքին և 16.7 քմ ներքին մակերեսով տարածքը և պարիսպը 1.8 քմ մակերեսով ճանաչել օրինական:

3. Սպարտակ Ստեփանյանին, Սոնիկ Բայաթյանին, Լուսինե Ստեփանյանին և Ալմաստ Ստեփանյանին, սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արաքս գյուղում 04-016-0024-0028 կադաստրային ծածկագրով գույքային միավորների՝ 799.0քմ օրինական հողամասի վրա 1995թ. կառուցված 20.7քմ մակերեսով կիսակառույցը ճանաչել օրինական:

4. ՀՀ Կառավարության 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:

5. Ընդունել ի գիտություն, որ

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

6. Սահմանել, որ ինքնակամ կառույցն իրականացրած անձը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Արմավիր համայնքի բյուջե պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի ՀՀ ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին»» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով հաշվարկված՝ ընդհանուր արտաքին 21.6 քմ մակերեսով ինքնակամ շինությունների օրինականացման յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ բազային տուրքի 10-ապատիկի չափով՝ 874.0 ՀՀ դրամ ընդհանուր 18878 (տասնութը հազար ութ հարյուր յոթանասունութ) ՀՀ դրամ, ընդհանուր արտաքին 1.8 քմ մակերեսով ինքնակամ պարսպի օրինականացման յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ բազային տուրքի 6-ապատիկի չափով՝ 524.4 ՀՀ դրամ ընդհանուր 944 (իննը հարյուր քառասունչորս) ՀՀ դրամ, ընդհանուր օրինականացման գումարը կազմում է 19822 (տասնիննը հազար ութ հարյուր քսաներկու) ՀՀ դրամ օրինականացման վճար:

7. Սպարտակ Ստեփանյանին, Սոնիկ Բայաթյանին, Լուսինե Ստեփանյանին և Ալմաստ Ստեփանյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնք Արաքս գյուղում գտնվող 04-016-0024-0028 կադաստրային ծածկագրով գույքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Արաքս գյուղ, Մ. Խաչունցի փողոց 75:

8. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արաքս գյուղում գտնվող 04-016-0024-0028 կադաստրային ծածկագրով գույքի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման ծածկագիրն է 2023VEGMLT:

9. Ուժը կորցրած ճանաչել 24 հոկտեմբեր 2023 թվականի N 1270-Ա որոշումը:

10. Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2023թ. Նոյեմբեր 13
ք. Արմավիր



Դ. ԽՈՒՂԱԹՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1356-Ա

ԻՆՔՆԱԿԱՍ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 11-րդ կետերով և 13-րդ կետի «ա» և «բ» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի «Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին» N 600-Ն որոշման 1-ին հավելվածի 2-րդ կետով 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N-1 հավելվածի 49-րդ կետով, ինքնակամ կառույցն իրականացրած անձի Պարույր Բևեռնիկի Նավասարդյանի 31.10.2023թ. թիվ 5998 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Պարույր Բևեռնիկի Նավասարդյանին սեփականության իրավունքով պատկանող /վկայական N2700627/ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաք Սայաթ-Նովա փողոց 7-րդ նրբանցք 1 հասցեում գտնվող գույքային միավորների՝ 0.06 հա օրինական հողամասի վրա կառուցված բնակելի տունը 227.0 քմ. արտաքին և 185.5 քմ ներքին մակերեսով, անասնաշենքը 15.3 քմ ներքին մակերեսով և 18.7 քմ արտաքին մակերեսով, ծածկոցը 24.4քմ մակերեսով և պարիսպը 4.6 քմ մակերեսով ճանաչել օրինական:

2 .Սահմանել, որ ինքնակամ կառույցն իրականացրած անձը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Արմավիր համայնքի բյուջե պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-

Ն որոշմամբ հաստատված կարգով հաշվարկված՝ ընդհանուր 274.8 քմ մակերեսով ինքնակամ բնակելի շինությունների օրինականացման յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ բազային տուրքի 10-ապատիկի չափով՝ 1969.0 ՀՀ դրամ ընդհանուր օրինականացման վճար՝ 541081 (հինգ հարյուր քառասունմեկ հազար ութսունմեկ) ՀՀ դրամ:

3. Ընդունելի գիտություն,որ

1)կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2)շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաք Սայաթ-Նովա փողոց 7-րդ նրբանցք 1 հասցեում գույքի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման ծածկագիրն է 2023XJ3SEF:

5.Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Դ.ԽՈՒՂԱԹՅԱՆ

2023 թ. նոյեմբեր 13
ք. Արմավիր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1357-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՍՈՒՐԻԿ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ ԵՎ ՌՈՒԶԱՆՆԱ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՃՇՏՎԱԾ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը և Սուրիկ Ղուկասյանի 06.11.2023 թ. թիվ 6132 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Սուրիկ Ղուկասյանի և Ռուզաննա Մկրտչյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մյասնիկյան գյուղում գտնվող 04-066-0080-0002 կադաստրային ծածկագրով գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, գյուղ Մյասնիկյան, 7-րդ փողոց, 51:
2. Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:
4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2023թ. նոյեմբեր 13
ք. Արմավիր

Գ. ԽՈՒՂԱԹՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 1358-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 11-րդ կետերով և 13-րդ կետի «ա» և «բ» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի «Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին» N 600-Ն որոշման 1-ին հավելվածի 2-րդ կետով 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N-1 հավելվածի 49-րդ կետով, ինքնակամ կառույցն իրականացրած անձի Գազիկ Խորենի Կոստանյանի 25.10.2023թ. թիվ 5917 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Գազիկ Խորենի Կոստանյանին սեփականության իրավունքով պատկանող /վկայական N2651622/ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաք Հանրապետության փողոց 81-83 հասցեում գտնվող գույքային միավորների՝ 0.1151 հա օրինական հողամասի վրա կառուցված բնակելի տունը 64.9 քմ. արտաքին և 55.7 քմ ներքին մակերեսով, ծածկը 41.6 քմ մակերեսով և պարիսպը 1.1 քմ մակերեսով ճանաչել օրինական, իսկ խորդանոցը, զուգարանը և կաթսայատունը համարել ինքնակամ:

2. Սահմանել, որ ինքնակամ կառույցն իրականացրած անձը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Արմավիր համայնքի բյուջե պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-

Ն որոշմամբ հաստատված կարգով հաշվարկված՝ ընդհանուր 107.6 քմ մակերեսով ինքնակամ բնակելի շինությունների օրինականացման յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ բազային տուրքի 10-ապատիկի չափով՝ 2316.0 ՀՀ դրամ ընդհանուր օրինականացման վճար՝ 249202 (երկու հարյուր քառասունինը հազար երկու հարյուր երկու) ՀՀ դրամ:

3. Ընդունելի գիտություն, որ

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Գագիկ Խորենի Կոստանյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաք Հանրապետության փողոց 81 և 83 հասցեներում գտնվող գույքային միավորներին տալ միասնական հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Արմավիր քաղաք Հանրապետության փողոց 81-83:

5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաք Հանրապետության փողոց 81-83 հասցեում գույքի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման ծածկագիրն է 2023ZRRMMD:

6. Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2023 թ. նոյեմբեր 13
ք. Արմավիր



Դ. ԽՈՐԵՆԻ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 1359-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԻ Ա.ԻՍԱՀԱԿՅԱՆ ՓՈՂՈՑ 51 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՌՈՒՍՏԱՄ ՇԻՐՎԱՆՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի ավագանու 2021 թ. դեկտեմբերի 27-ի թիվ 126-Ն որոշումը, ըստ ժառանգության վկայագրի 14.09.2023թ և Ռուստամ Շիրվանյանի լիազորված անձ՝ Տիգրան Շահբազյանի 03.11.2023թ. թիվ 6115 դիմումը՝ և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Ա. Իսահակյան փողոց 51 հասցեում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդթվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վերականգնել Ռուստամ Շիրվանյանին /ծնված 24.06.2000թ./ սեփականության իրավունքը Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Ա. Իսահակյան փողոց 51 հասցեում գտնվող գույքային միավորների՝ 580.0 քմ օրինական հողամասի վրա 1975թ. կառուցված 106.1 քմ մակերեսով բնակելի տան, 1992թ կառուցված 15.9 քմ մակերեսով ավտոտնակի, 1992թ կառուցված 21.7 քմ մակերեսով օժանդակ շինությունների նկատմամբ:

3. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները ենթակա են պետական գրանցման:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու,

հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար սահմանված տեղական վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2023թ. նոյեմբեր 13
ք. Արմավիր



Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1360-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ, 31-րդ, 13-րդ կետերի <<ա>> և <<բ>> ենթակետերով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> N 600-Ն որոշման 2-րդ հավելվածի 6-րդ կետով, <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>>, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 5-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը, և ինքնակամ կառույցն իրականացրած անձի Սամվել Մովսիսյանի 27.04.2023 թ. թիվ 2554 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Սամվել Մովսիսյանին / սեփականության իրավունքով պատկանող վկայական 023757/ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Հանրապետության փողոցի 43 բազմաբնակարան բնակելի շենքի թիվ 19 առաջին հարկի բնակելի նշանակության տարածքին կից ինքնակամ իրականացրած՝ տարածքի 3.8 քմ արտաքին մակերեսով աստիճանը և ինքնակամ բացված 3 դուռը ճանաչել օրինական, իսկ 49.95 քմ մակերեսով բնակարանի գործառական նշանակությունը սահմանել հասարակական նշանակության՝ որպես խանութ:

2. Ընդունելի գիտություն, որ

- 1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.
- 2) շինությունը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Սահմանել, որ դիմողը

- 1) Սահմանել, որ իքնակամ կառույցն իրականացրած անձը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի բյուջե պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով հաշվարկված՝ ընդհանուր 3.8 քմ մակերեսով ինքնակամ կառուցված շինության օրինականացման յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ բազային տուրքի 2-ապատիկի չափով՝ 4632 ՀՀ դրամ ընդհանուր 17602 /տասնյոթ հազար վեց հարյուր երկու/և ինքնակամ բացված 3 դուռը՝ 2316/երկու հազար երեք հարյուր տասնվեց /ՀՀ դրամ, ընդհանուր՝ 19918 (տասնինը հազար իննը հարյուր տասնութ) ՀՀ դրամ:

- 2) իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Հանրապետության փողոցի 43 բազմաբնակարան բնակելի շենքի թիվ 19 հասցեում գտնվող գույքի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման ծածկագիրն է 2023Z32FGD:


5. Ուժը կորցրած ճանաչել 31 օգոստոսի 2023 թվականի N 1091-Ա որոշումը:

6. Սույն որոշումը ՀՀ Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Դ.ԽՈՒՂԱԹՅԱՆ

2023 թ. նոյեմբեր 13
ք. Արմավիր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1361-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՔԻ ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԻ
ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔ Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ 9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԼԱՎԻԿ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով, 50-րդ և 51-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8, 11-րդ կետերով և 13-րդ կետի <<ա>> և <<բ>> ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> N600-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին, 2-րդ 4-րդ կետով, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Տ.Պետրոսյան 9 հասցեում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին, /10 օգոստոսի 2023 թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը/ և ինքնակամ կառույցն իրականացրած անձի՝ Սլավիկ Խաչատուրի Խաչատրյանի 02.10.2023թ. թիվ 5509 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վերականգնել Սլավիկ Խաչատուրի Խաչատրյանի սեփականության իրավունքը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Տ.Պետրոսյան 9 հասցեում գտնվող՝ 584.3 քմ օրինական հողամասի վրա 1960թ. կառուցված 98.9 քմ մակերեսով բնակելի տան նկատմամբ:

2. Սլավիկ Խաչատուրի Խաչատրյանին պատկանող՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Տ.Պետրոսյան 9 հասցեում գտնվող

584.3 քմ մակերեսով տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված բնակելի տունը՝ 89.5 քմ արտաքին և 66.9 քմ ներքին մակերեսով, բունը՝ 3.5 քմ արտաքին և 2.5 քմ ներքին մակերեսով, ծածկը՝ 27.6 քմ մակերեսով և պարիսպը՝ 7.1 քմ մակերեսով ճանաչել օրինական:

3. Ընդունելի գիտություն, որ

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Սահմանել, որ ինքնակամ կառույցն իրականացրած անձը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Արմավիրի համայնքի բյուջե պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով հաշվարկված՝ ընդհանուր արտաքին 127.7 քմ մակերեսով ինքնակամ շինությունների օրինականացման յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ բազային տուրքի 10-ապատիկի չափով՝ 1673.0 ՀՀ դրամ ընդհանուր 213642 / երկու հարյուր տասներեք հազար վեց հարյուր քառասուններկու / ՀՀ դրամ օրինականացման վճար:

5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Տ.Պետրոսյան 9 հասցեում գտնվող գույքի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման ծածկագիրն է 2023VG9JRK:

6. Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023 թ. նոյեմբեր 13
ք. Արմավիր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1362-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԻ Հ.ԱՎԵՏԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ 12 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍԻՄՈՆ
ԽԱՉԱՏՈՒՐԻ ԿԱՄՈՅԱՆԻՆ,ԱՆԱՀԻՏ ՅՈՒՐԻԿԻ ՆԱՄԴԱՐԻՆ ԵՎ ԱՆԺԵԼԱ
ՍԻՄՈՆԻ ԿԱՄՈՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական քնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը, ըստ ժառանգության վկայագրի 06.03.2018թ և Սիմոն Խաչատուրի Կամոյանի 08.12.2022թ. թիվ 6605 դիմումը և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի 04-001-0232-0011 կադաստրային ծածկագրով հողամասում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վերականգնել Սիմոն Կամոյանին/ ծնված՝ 02.08.1983թ./, սեփականության իրավունքը Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Հ.Ավետիսյան փողոց 122 հասցեի գույքային միավորների՝ 773.0 քմ օրինական հողամասի վրա 1960թ. և 1998 թ. կառուցված 178.6 քմ մակերեսով քնակելի տան և 1960 թ. կառուցված 16.1քմ մակերեսով խոհանոցի, 1960թ. կառուցված 9.4քմ մակերեսով թոնրատան, 1960թ. կառուցված 21.0քմ մակերեսով խորդանոցի, 1960թ. կառուցված 18.8 քմ մակերեսով մառանի, 1998թ. կառուցված 65.4 քմ մակերեսով ծածկի, 1960թ. կառուցված 69.5 քմ մակերեսով, 1960թ. կառուցված 43.2 քմ մակերեսով հավաքնի նկատմամբ, ծածկը համարել ինքնակամ:

2. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար սահմանված տեղական վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԴԱՌԻՂԱԹՅԱՆ

2023 թ. նոյեմբեր 13
ք. Արմավիր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1363-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Երևանյան փողոց թիվ 1/19 հասցեում քաղ. Մանվել Ֆիդանյանի կողմից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի սեփականություն հանդիսացող 71.3 քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 71.28 քմ ընդհանուր արտաքին մակերեսով և 60.1 քմ ներքին մակերեսով ավտոտեխսպասարկման կայանի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարի 22.09.2023թ. թիվ 1160-Ա որոշմամբ ճանաչվել է Արմավիր համայնքի սեփականություն / սեփականության վկայական 03102023-04-0018 / և օրինականացվել է: Քաղ. Մանվել Ֆիդանյանի կողմից դիմում է ներկայացվել համայնքապետարան նշված շինությունը 71.28 քմ ընդհանուր արտաքին մակերեսով և 60.1 քմ ներքին մակերեսով ավտոտեխսպասարկման կայանի և օգտագործման համար անհրաժեշտ 71.28 քմ ընդհանուր արտաքին մակերեսով և 60.1 քմ ներքին մակերեսով հողամասը գնման նախապատվության իրավունքով իրեն օտարելու մասին: Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35 կետի բ) ենթակետով, 35.1 և 36-րդ կետերով, հիմք ընդունելով քաղ. Մանվել Ֆիդանյանի 01.06.2023 թ. թիվ 3362 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Երևանյան փողոց թիվ 1/19 հասցեում գտնվող ինքնակամ կառուցված ավտոտեխսպասարկման կայանը՝ 71.28 քմ արտաքին մակերեսով օտարել

Մանվել Ֆիդանյանին՝ բազային տուրքի 20-ապատիկի չափով 1 քմ 17724 դրամով ընդհանուր 1263153 /մեկ միլիոն երկու հարյուր վաթսուներեք հազար հարյուր հիսուներեք / ՀՀ դրամ, իսկ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի սեփականություն հանդիսացող 71.3 քմ արտաքին մակերեսով հողամասը օտարել՝ հողամասի կադաստրային արժեքով՝ 1 քմ 4441.8 դրամով՝ ընդհանուր 316700 / երեք հարյուր տասնվեց հազար յոթ հարյուր / ՀՀ դրամ, ընդհանուր առմամբ վճարման ենթակա է՝ 1579853 /մեկ միլիոն հինգ հարյուր յոթանասունինը հազար ութ հարյուր հիսուներեք / ՀՀ դրամ:

2.Վաճառքի գնին հավելվում են մինչև օտարումը համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ 26000 (քսանվեց հազար) ՀՀ դրամ: Ընդհանուր առմամբ անհրաժեշտ է վճարել 1605863 (մեկ միլիոն վեց հարյուր հինգ հազար ութ հարյուր վաթսուներեք) ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 1605863 /մեկ միլիոն վեց հարյուր հինգ հազար ութ հարյուր վաթսուներեք/ ՀՀ դրամ օրինականացման գումարը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի բյուջե վճարելուց հետո:

4.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և ենթակա է պետական գրանցման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023 թ. նոյեմբեր 13
ք. Արմավիր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Արմավիր, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 նոյեմբերի 2023 թվականի N 1364-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ՏԱԿ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ

ԵՎ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի քաղաքային համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 106-Ա և ՀՀ Արմավիրի քաղաքապետի 2011 թվականի դեկտեմբերի 09-ի թիվ 640-Ա որոշումների համաձայն՝ Արմավիր քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող՝ Արմավիր քաղաքի Արովյան 137 հասցեում գտնվող վարչական շենքի 3-րդ հարկից 36.6 քմ ընդհանուր մակերեսով տարածքը վարձակալությամբ՝ 5 (հինգ) տարի ժամկետով տրամադրվել է «Նաիրի» հաշմանդամ երեխաների ծնողների հասարակական կազմակերպությանը, համաձայն որի Արմավիրի քաղաքային համայնքի և «Նաիրի» հաշմանդամ երեխաների ծնողների հասարակական կազմակերպության միջև 2011 թվականի դեկտեմբերի 29-ին կնքվել է անշարժ գույքի վարձակալության պայմանագիր /սեղ.նո 8734/:


Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 466-րդ, 468-րդ հոդվածների 1-ին մասերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով «Նաիրի» հաշմանդամ երեխաների ծնողների հասարակական կազմակերպության նախագահ՝ Գայանե Ազոյանի 2023 թվականի նոյեմբերի 08-ի թիվ 6173 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արմավիրի քաղաքապետի 2011 թվականի դեկտեմբերի 09-ի թիվ 640-Ա որոշման համաձայն՝ «Նաիրի» հաշմանդամ երեխաների ծնողների հասարակական կազմակերպությանը վարձակալության իրավունքով տրամադրված Արմավիր քաղաքի Արովյան փողոց 137 հասցեում գտնվող վարչական շենքի 3-րդ հարկից 36.6 քմ ընդհանուր մակերեսով տարածքը հետ վերցնել Արմավիրի համայնքապետարանի տնօրինության տակ:
2. Ուժը կորցրած ճանաչել Արմավիրի քաղաքապետի 2011 թվականի դեկտեմբերի 09-ի թիվ 640-Ա որոշումն, իսկ դրա հիման վրա կնքված՝ 2011 թվականի դեկտեմբերի 29-ի /սեղ. նո. 8734/ անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը՝ համարել լուծված:
3. Հանձնարարել «Նաիրի» հաշմանդամ երեխաների ծնողների հասարակական կազմակերպության նախագահ՝ Գայանե Ազոյանին տարածքը վերադարձնել բարեկարգ վիճակում:

Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ



Դ. ԽՈՒՂԱԹՅԱՆ

2023թ. նոյեմբերի 13
ք. Արմավիր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1365-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Մ. Հերացու փողոց թիվ 12/5 հասցեում քաղ. Մացիկ Երվանդի Մայիլյանի կողմից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի սեփականություն հանդիսացող 1223.0 քմ մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված սարքավորումն՝ 274.0 քմ արտաքին մակերեսով և 258.0 քմ ներքին մակերեսով սարքավորումների վերանորոգման կետի, 118.4 քմ մակերեսով ծածկոցների, 91.5 քմ արտաքին մակերեսով և 82.2 քմ ներքին մակերեսով պահեստի և պարիսպների 16.4 քմ մակերեսով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարի 04.10.2023թ. թիվ 1187-Ա որոշմամբ ճանաչվել է Արմավիր համայնքի սեփականություն և օրինականացվել է: Քաղ. Մացիկ Մայիլյանի կողմից դիմում է ներկայացվել համայնքապետարան 1223.0 քմ ընդհանուր արտաքին մակերեսով շինությունների զբաղեցրած և օգտագործման համար անհրաժեշտ 222.4 քմ մակերեսով հողամասը գնման նախապատվության իրավունքով իրեն օտարելու մասին: Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 35 կետի բ) ենթակետով և 36-րդ կետով, հիմք ընդունելով Մացիկ Երվանդի Մայիլյանի 25.10.2023թ. թիվ 5924 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Մ. Հերացու փողոց թիվ 12/5 հասցեում գտնվող ինքնակամ կառուցված շինությունները՝ 500.3 քմ ընդհանուր արտաքին մակերեսով օտարել Մացիկ Երվանդի Մայիլյանին՝ բազային տուրքի 90-ապատիկի չափով 1 քմ 10881 դրամով ընդհանուր 5443764 (երեք միլիոն երկու հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ, իսկ Հայաստանի

